ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ք.Եղեգնաձոր 13 հունիս 2022թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> ընդլայնված նիստի

Նիստը վարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյանը: Նիստի աշխատանքներին մասնակցում են հանձնաժողովի 11 անդամներից 10-ը:

Հրավիրված են «Ներառական իրավական բարեփոխումների» կոալիցիայի համակարգող, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ-ի նախագահ Մուշեղ Հովսեփյանը, կոալիցիայի շահերի պաշտպանության համակարգող, «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հաշմանդամություն ունեցող անձանց ՀԿ-ի նախագահ Անուշ Ասլանյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս. Մարգարյանը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Վ.Ասլանյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի նպատակը, կառուցվածքը և «Դեպի ներառական Հայաստան» ծրագիրը /Մ.Հովսեփյան/:
2. Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների ներկայացում /Անուշ Ասլանյան/:
3. Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի կողմից «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող միջոցառումների ներկայացում /Մ.Հովսեփյան/:
4. Քննարկումներ:

Մ.Հովսեփյանը ներկայացրեց <<Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի>> ստեղծման պատմությունը: Կոալիցիան՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների և անհատների միություն է, որը հիմնադրվել է 2017 թվականին: Կոալիցիային անդամակցում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող 14 կազմակերպություններ և 5 անհատներ:

<<Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի>> կողմից իրականացվում է «Դեպի ներառական Հայաստան» ծրագիրը, որի նպատակն է մասնակցել ՀՀ ԱՍՀՆ հետ համատեղ ներառական օենսդրության մշակմանը, օրենքների արդյունավետ կիրարկման մշտադիտարկմանը: Ծրագրի թիրախային խումբը հաշմանդամություն ունեցող անձինք են, նրանց ընտանիքի անդամները, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի կողմից հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների մասին ներկայացրեց Ա. Ասլանյանը: Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան տրամադրում է անվճար

իրավաբանական աջակցություն: Կարողությունների զարգացման համար կազմակերպում է անվճար դասընթացներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հետ աշխատող անձանց համար: Առաջիկայում նախատեսվում է օնլայն դասընթացներ տեղեկատվական մատչելիության վերաբերյալ: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար կազմակերպում են հոգեբանական աջակցության ծառայություններ:
Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի կողմից «Դեպի ներառական Հայաստան» ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց համար կազմակերպվում են օրենսդրության լուսաբանման, մշակութային և այլ միջոցառումներ:
Քննարկումներ՝

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյանը առաջարկեց <<Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի>> ծրագրերի վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն տրամադրել ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովին>>՝ հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց խնդիրներով զբաղվող կազմակերպություններին, համայնքապետարանների սոցիալական աշխատողներին իրազեկելու և ակտիվ մասնակցություն ապահովելու համար:
Սոցիալ հոգեբանական և վիճակագրական հետազոտությունների կենտրոն>> ՀԿ –ի նախագահ Խ. Մարկոսյանը ներկայացրեց իրենց կատարած աշխատանքները և առաջարկեց համագործակցել կոալիցիայի հետ՝ ՀՀ Վայոց ձորի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման համար:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Խաչատրյանը ներկայացրեց հաշմանդամություն ունեցող երեխաների հետ կապված խնդրահարույց դեպքերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի անդամների հետ կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերվող օրենսդրական փոփոխությունների իրազեկման միջոցառումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց հարցերով զբաղվող կազմակերպությունների, համայնքապետարանների սոցիալական աշխատողների հետ:
2. Համագործակցել <<Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի>> հետ համատեղ ծրագրեր իրականացնելու գործում:

Հանձնաժողովի նախագահ Դ. Սարգսյան
Քարտուղար Ց.Բաբայան